

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2018թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի հ.87-Ն որոշումը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ՝ «Մեգերյան Կարպետ» բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան, Շենգավիթ վարչական շրջանի, Հ.Հովսեփյան փողոցի հ.15/7 հասցեում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 1234.86քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 23.02.2018թ. հ.23022018-01-0226 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Ս. Զորավարի փողոցի հ.1 և հ.3 հասցեներում և տարածագնահատման 5-րդ գոտում գտնվող, համապատասխանաբար՝ 411.48քմ և 412.53քմ մակերեսներով հողամասերի հետ փոխանակելուն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է «Մեգերյան Կարպետ» բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Շենգավիթ վարչական շրջանի, Հ.Հովսեփյան փողոցի հ.15/7 հասցեում գտնվող **1234.86**քմ մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Ս.Զորավարի փողոցի հ.1 և հ.3 հասցեներում գտնվող համապատասխանաբար՝ **411.48**քմ և **412.53**քմ մակերեսներով հողամասերի հետ:

«Մեգերյան Կարպետ» բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողամասը գտնվում է բնակելի նշանակության շինություններով կառուցապատված հատվածում և հարևանությամբ առկա են բնակելի տներ, որոնք սեփականության իրավունքով պատկանում են տարբեր քաղաքացիների: Նշված ընկերությանը պատկանող վերոնշյալ հողամասի մակերեսը կազմել է **2000.0**քմ, սակայն տարիների ընթացքում հարևան սեփականատերերի կողմից կառուցապատման արդյունքում ձևավորված միջավայրում այն չի պահպանվել և փաստացի գոյություն ունեցող ուրվագծով և չափով կազմում է ընդամենը **1234.86**քմ: Ներկայումս ընկերությունը նշված մակերեսի չափով գրանցել է իր սեփականության իրավունքը՝ ըստ էության հրաժարվելով սեփականության իրավունքով ընկերությանը պատկանող հողամասի մի հատվածից: Վերագրանցված **1234.86**քմ մակերեսով հողամասի սահմաններում ներառված չեն տարիների ընթացքում կառուցապատված և այլ անձանց պատկանող հատվածները: Արդյունքում վերացել են նաև հողամասերի համադրումները, սակայն նոր ուրվագծով ձևավորված հողամասը սեպաձև է և այն ըստ նշանակության օգտագործվելու պարագայում կստեղծվի անկանոն կառուցապատման գոտի:

Ներկայումս իրավիճակը շտկելու և տվյալ տարածքում քաղաքաշինական առումով առավել կանոնակարգված հատված ձևավորելու նպատակով նախատեսվում է կատարել հողամասերի փոխանակում, որի արդյունքում հնարավոր կլինի ապահովել գույքերի առավել արդյունավետ օգտագործումը:

Համաձայն համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից տրված հողամասերի շուկայական արժեքների գնահատման հաշվետվությունների՝ «Մեգերյան Կարպետ» բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող **1234.86**քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը գնահատվել է **33 250 000** /երեսուներեք միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, իսկ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող համապատասխանաբար **411.48**քմ և **412.53**քմ մակերեսներով հողամասերինը՝ ընդհանուր **33 100 000** /երեսուներեք միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ, որոնց տարբերություն կազմող **150 000** /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ գումարից ընկերությունը գրավոր հրաժարվել է:

Հողամասերի փոխանակումը հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել քննարկվող հատվածները ոչ միայն քաղաքաշինական առումով, այլ նաև հաշվի առնելով «Մեգերյան Կարպետ» բաց բաժնետիրական ընկերության գործունեության ուղղվածությունը՝ հայկական գորգագործության վերարտադրության, պահպանման և զարգացման նպատակով:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**« ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ